
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱՆՇՈՂ ԼԵԶԿԱՄԻԱՎՈՐՆԵՐԻ
ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Լ. Ա.

Տնտեսական իրադարձություն կարելի է համարել այն ամենը, ինչ կատարվում է համաշխարհային, ինչպես նաև առանձին վերցրած երկրների տնտեսության ներսում և ներառում է ցանկացած տնտեսական անկում և վերելք առաջացնող իրավիճակ, օրինակ՝ նոր ապրանքների թողարկում, ընկերությունների համագործակցության սկիզբ, միաձուլում, կլանում, փլուզում, արժեթղթերի արժեքի կտրուկ աճ կամ անկում և նմանատիպ այլ իրադարձություններ, որոնք հասարակությունը արժևորում է որպես տնտեսական աշխարհում էական, կարևոր փոփոխություններ: Տնտեսական աշխարհում իրադարձության գոյաբանական կարգավիճակը սահմանվում է զանազան լեզվամիավորների միջոցով նրա անվանմամբ, որոնք տարբերվում են իրենց իմաստով, ծավալով և որակավորմամբ:

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել տնտեսական իրադարձություն, այսինքն՝ տնտեսական վերելք և անկում ցուցանող լեզվամիավորների իմաստաբանական կառուցվածքը, վեր հանել այն իմաստությունները, որոնք առկա են այս բառայիններում և սահմանում են այս կամ այն տնտեսական իրադարձության անվանման համար վերջիններիս կիրարկումը:

Փաստական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ տնտեսական իրադարձությունը կարող է անվանվել ոչ միայն համաիրադարձային բառային միավորների օգնությամբ, այլև ավելի որոշարկված իրադարձություն ցուցանող լեզվամիավորների միջոցով, օրինակ՝ *increase*, *collapse*, *merger*, *catastrophe*, *dive* և այլն, որոնք անվանելով իրադարձությունը, միևնույն ժամանակ իրենց իմաստաբանական համակարգում առկա իմաստությունների շնորհիվ որոշակիացնում են տվյալ եղելությունը: Օրինակ՝

increase – a rise in the size, amount, or degree of something

collapse – a sudden failure of an institution or undertaking

merger – a combination of two things, especially companies, into one

catastrophe – something very unfortunate or unsuccessful

Անշուշտ, անգլերենը հարուստ է որոշարկված իրադարձություն ցուցանող լեզվամիավորներով, քանի որ աշխարհում կատարվող իրադարձությունների քանակը չափազանց մեծ է, առավել ևս՝ գործարար բնագավառում: Բացի այդ, միևնույն իրադարձությունը կարող է ցուցանվել մի շարք բառերի օգնությամբ: Օրինակ՝

About the time President Barack Obama was sternly discussing the BP oil spill with the prime minister, David Cameron, by telephone yesterday, a protest group known as the South

Florida Raging Grannies was plastering its latest video across the internet.... The agreement was reached at the White House – although President Obama said it did not represent a cap on BP's liability over the environmental catastrophe. BP is also setting up a \$100 million fund to compensate oil workers laid off because of the disaster. (The Financial Times, June, 2010)¹

The financial crisis had many causes - too much borrowing, foolish investments, misguided regulation - but at its core, the panic resulted from a lack of transparency. ... The loss emanated from a little - known corner of the bank called the Chief Investment Office. (The Atlantic, January, 2013)²

Now, Hutchison Whampoa's Three is proposing to buy a rival network, O2, for some 10bn. As ever with large mergers, the companies say the activity will benefit customers... The bidders are brimful of assurances about the advantages that will flow from consolidation. Hutchison, for instance, claims that its acquisition will release capital that can be reinvested in improving service quality... Three's deal is particularly troubling from the consumer's perspective. (The Financial Times, January, 2015)³

Միևնույն իրադարձությունը զանազան անվանական միջոցների օգնությամբ ներկայացնելը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Առաջին հերթին այն հետապնդում է կրկնություններից խուսափելու նպատակ, ավելին, բառային միավորները, ունենալով տարբեր իմաստային ծանրաբեռնվածություն, յուրովի են բնորոշում այս կամ այն եղելությունը:

Քանի որ յուրաքանչյուր տնտեսական իրադարձության վերջնական արդյունքը հանգեցնում է տնտեսական անկման կամ վերելքի, նմանատիպ իրադարձությունների բուն էությունն ըմբռնելու համար նպատակահարմար է քննության առնել սույն իրադարձությունների նկարագրման համար ծառայող համապատասխան լեզվամիավորների իմաստաբանությունը: Հետազոտության այս փուլում կատարվել է մի շարք բացատրական բառարաններից տնտեսական իրադարձություն ցուցանշող բառային միավորների ընտրություն, որոնց սահմանումները լրացվել և ստուգվել են հոմանիշների բառարաններով⁴: Տնտեսական վերելք ցուցանշող գոյականները հետևյալներն են.

¹ The Financial Times www.ft.com

² The Atlantic www.theatlantic.com

³ The Financial Times www.ft.com

⁴ 1. Merriam-Webster's New Dictionary of Synonyms. USA, Merriam Company Publisher, 1978, 2. Oxford Advanced Learner's Dictionary of Current English, Oxford, N. Y., Oxford University Press, 2009, 3. Random House Unabridged Dictionary. N.Y., Random House, 1993, 4. www.oxforddictionaries.com, 5. www.thefreedictionary.com

advance - a forward movement; a development or improvement; an increase in amount
advancement – a forward step; an improvement; development; progress
amelioration – the act of making something better; improvement
amplification – the act or result of amplifying, enlarging, or extending
augmentation – the action or process of making or becoming greater in size or amount
betterment – the act or process of bettering; improvement
boom – a sudden increase, as in popularity; a time of economic prosperity
boost – an increase or improvement
climb – a rise or increase in value, rank, or power
development – a specified state of growth or advancement
elevation – the action of raising to a higher position; increase in the level of something
enhancement – an increase or improvement in quality, value, or extent
enlargement – the action or state of enlarging or being enlarged
escalation – a rapid increase; a rise
expansion – an act of increasing or making something increase in size, amount
gain – an increase or advance, profit or advantage
growth – the process of increasing in size; increase in economic activity or value
headway – forward movement; progress in general
hike – an increase or rise, often sharp and unexpected
improvement – a change by which a something is improved; betterment
increase – a rise in the size, amount, or degree of something
increment – an increase or addition, especially one of a series on a fixed scale: a regular increase in salary on an incremental scale
inflation – a general increase in prices and fall in the purchasing value of money
progress – development, advancement, or improvement, as toward a goal
promotion – an act, event that helps to increase demand for something
rise – an upward movement; an instance of rising
surge – a sudden large increase, typically a temporary one

Կիրառելով բաղադրիչային վերլուծության մեթոդը, որը հիմնվում է բառարանագրական աղբյուրներում ներկայացված բառիմաստների սահմանումային վերլուծության վրա, փորձենք ուրվագծել այս բառերում առկա իմաստությունները: Որպես նախաստիպային իմաստությո՞թ (ՈԸԼԵԴԻԿԵԼ)՝ առանձնանում է իրադարձություն ընդհանուր իմաստությո՞ր: Այնուհետև որոշարկվում են տեսակային նշանակության տարբերակիչ (դիֆերենցիալ) իմաստությունները՝ գործընթաց/գործողություն, փոփոխություն և աճ բաղադրիչները: Ստորին մակարդակում առանձնանում են հանկարծակիություն և բարելավում պոտենցիալ իմաստությունները, որոնք արտացոլում

են իմաստների պոտենցիալ հատկանիշները և ակտիվանում են որոշակի պայմաններում, այսինքն՝ համատեքստում:

Այսպիսով, բնականաբար, վերոգրյալ բոլոր բառերի իմաստաբանական բովանդակության մեջ առկա են «իրադարձություն» նախատիպային իմաստությոթ, տեսակային նշանակության «գործընթաց/գործողություն», «փոփոխություն» և «աճ» տարբերակիչ իմաստությունները: Բարգավաճում, զարգացում են ցուցանշում *advance, advancement, amelioration, amplification, betterment, development, enhancement, enlargement, gain, headway, improvement, progress, promotion* բառությունները՝ «բարելավում» պոտենցիալ իմաստությոթի շնորհիվ: «Հանկարծակիություն» պոտենցիալ իմաստությոթն առկա է *boom, escalation, hike, surge* գոյականներում:

Հարկ է նշել, որ սույն ուսումնասիրության մեջ ընդգրկված չեն բարդ բառեր, օրինակ՝ *nosedive, slowdown, upswing* և այլն: Ինչպես նաև ներառված չեն լճացում, անկումային շրջան/ ժամանակահատված անվանող լեզվամիավորները, օրինակ՝ *crisis, depression, stagnation, doldrums, lull, slack* և այլն, որոնք ցուցանշում են ոչ թե տնտեսական իրադարձություն, այլ, ըստ էության, դրանք կատարված իրադարձությունների հետևանք են և բնորոշում են ինչ-որ փոփոխության հետևանք հանդիսացող ժամանակահատված/ իրադրություն: Դա են վկայում տվյալ բառերի սահմանումները՝

crisis – unstable period, especially one of extreme trouble or danger in politics, economics, etc.

depression – a period of drastic economic decline, of poverty and high unemployment

doldrums – a period of stagnation or slump

lull – an interval of lessened activity

slack – a period of little activity

Իրադրություն հասկացությունը ավելի լայնիմաստ է քան իրադարձությունը: Տնտեսական իրադրությունը, օրինակ, ներառում է մի շարք գործոններ, ինչպիսիք են մարդիկ, երկիրը, նույնիսկ երկրները, դրա հետ կապված սոցիալ-տնտեսական վիճակները, ապրանքները, ներմուծումները, արտահանումները և այլն: Այս մեկ իրադրությունը կարող է պարփակել մի շարք իրադարձություններ: Որպես ավելի կոնկրետ օրինակ՝ կարող ենք վերցնել մենաշնորհ (մոնոպոլիա) հասկացությունը, որը դիտարկվում է որպես շուկայում մի իրադրություն, որտեղ որոշակի գործառնությամբ զբաղվելու համար (օրինակ՝ որոշակի ապրանքի միակ մատակարարող կամ արտադրող լինելը) բացառիկ իրավունք է տրված եզակի ֆիզիկական անձին կամ կազմակերպությանը: Մենաշնորհը չի կարող դիտարկվել որպես իրադարձություն, քանի որ դա հանգամանքների հանրագումարի մի արդյունք է, ավելի շուտ տվյալ իրավիճակին նախորդող իրադարձության կամ իրադարձությունների արդյունք: Այս

պարագայում ստեղծված մոնոպոլիստական իրավիճակը կարող է հիմք և պատճառ հանդիսանալ բազմաթիվ նոր իրադարձությունների համար, այսինքն՝ լինել փոփոխություն առաջացնող խթան, սակայն հենց այս միջավայրը չի կարող համարվել իրադարձություն, այլ մշտական և հաստատուն միջավայր է, գործերի դրություն, այսինքն՝ իրադրություն: Նույնը կարելի է ասել նաև լճացում /stagnation/ իրադրության վերաբերյալ, որը ոչ թե կատարվող կամ կատարված իրադարձություն է, այլ իրավիճակ, դրություն, որին բնորոշ են տնտեսության համար մի շարք բացասական հատկանիշներ:

Տնտեսական անկում ցուցանշող լեզվամիավորները բերված են ստորև՝

abatement – the act or state of abating; reduction; decrease; mitigation

collapse – the act of falling down, an abrupt failure of function, strength, or health

contraction – a decrease in economic and industrial activity

crash – a sudden general collapse of a business enterprise, prosperity, the stock market, etc.

curtailment – an act of economizing; reduction in cost

cut – a reduction in price, salary, etc.

declension – a decline or decrease; deterioration

decline – a downward slope, movement, as of prices or population; gradual loss, as in strength, character, power, value; deterioration

decrement – the act or process of decreasing; gradual reduction

decrease – the act or process of diminishing; reduction

deflation – a fall in the general price level or a contraction of credit and available money

depletion – the act of decreasing something markedly

depreciation – decrease in value due to wear and tear, decay, decline in price, etc. a decrease in the purchasing or exchange value of money

descent – the act, process, or fact of moving from a higher to a lower position; decline

deterioration – a gradual decline, as in quality, serviceability, or vigor

diminution – the act of decreasing or reducing something

disruption – a radical change in an industry, business strategy, etc., especially involving the introduction of a new product or service that creates a new market

dive – a sudden or sharp decline, as in stock prices

fall – a sudden drop from a relatively erect to a less erect position

minimization – the act of reducing something to the least possible amount or degree

recession – a fall in trade or in the economy of a country

reduction – the act or process of reducing; an act of making something less or smaller

shrinkage – reduction or depreciation in quantity, value, etc.

slide – a change to a lower or worse condition; a period of decline or loss

slump – a sudden falling off or decline, as in activity, prices, or business

Բնչպես երևում է, որպես նախատիպային իմաստությո՜ւթ, այստեղ նույնպես առանձնանում է «իրադարձություն» ընդհանուր իմաստությո՜ւթը: Այնուհետև որոշարկ-վում են «գործընթաց/գործողություն», «փոփոխություն» և «անկում» տեսակային նշանակության տարբերակիչ իմաստությո՜ւթերը: Ստորին մակարդակում առանձնանում են «հանկարծակիություն» և «աստիճանական վատթարացում/անկում» պոտենցիալ իմաստությո՜ւթերը: «Հանկարծակիություն» իմաստությո՜ւթը առկա է *collapse, crash, dive, fall* բառությո՜ւթներում, մինչդեռ *disruption* լեզվամիավորում այն գուցորդվում է «աստիճանական վատթարացում/անկում» իմաստությո՜ւթի հետ: Որոշ գոյականներում (*decline, decrement, depreciation, deterioration, slide*) նույնպես առանձնանում է «աստիճանական վատթարացում/անկում» իմաստությո՜ւթը՝ ցուցանշելով տևողական, կայուն բացասական փոփոխություն: Մնացյալ բառերը, ըստ էության, ավելի չեզոք են և սահմանափակված չեն պոտենցիալ իմաստությո՜ւթերի առկայությամբ, որն էլ թույլ է տալիս կիրառել տվյալ բառերը ավելի լայն համատեքստում:

Պետ է նշել, որ տնտեսական աճ և անկում ցուցանշող բառերի սահմանագծում առանձնանում են որոշ լեզվամիավորներ, որոնք նշանակում են վերընթաց կամ վարընթաց փոփոխություններ, տատանումներ, անկայունություն: Հստակ է, որ վերոնշյալ բառերի նախատիպային իմաստությո՜ւթը այստեղ նույնպես «իրադարձություն» է, տարբերակիչ իմաստությո՜ւթներն են «գործընթաց/ գործողություն», «փոփոխություն»: Բնչ վերաբերում է «տատանում» պոտենցիալ իմաստությո՜ւթին, ապա այն դրսևորվում է համատեքստում: Դրանք են հետևյալ բառերը իրենց սահմանումներով.

fluctuation – recurring changes in economic activity consisting of recession and recovery, growth and decline

spiral – a progressive rise or fall of prices, wages, etc., a process of deterioration through the continuous increase or decrease of a specified feature

swing – a regular upward or downward movement in any business activity

Տնտեսական վերելքների և անկումների իմաստային կազմի նկարագրությունը թույլ տվեց մեզ հանրագումարի բերել նրա իմաստաբանական բովանդակությունը և պարզել տնտեսական իրադարձային նշանակության ձևավորման համար անհրաժեշտ բաղադրիչները, որոնք են «գործընթաց/գործողություն», «փոփոխություն», «աճ» և «անկում» տարբերակիչ իմաստությո՜ւթերը, ինչպես նաև «հանկարծակիություն», «բարելավում», «վատթարացում», «տատանում» պոտենցիալ իմաստությո՜ւթերը: Այս առումով, կարելի է նաև ենթադրել, որ վերոնշյալ բառերի կազմը հարիր է և շատ մոտ է կանգնած համաիրադարձային բառությո՜ւթերին՝ իրենց ունակությամբ անվանել չհստակեցված, տարբեր ծավալի, որակի տնտեսական իրադարձություններ, ունենալ

բազում իրադարձային նշաններ, և որոնք, ինչպես համաիրադարձային լեզվամիավորները, բացահայտում են իրենց վերջնական իմաստը՝ հենվելով միմիայն համատեքստի վրա:

СЕМАНТИЧЕСКИЙ АНАЛИЗ ЛЕКСИЧЕСКИХ ЕДИНИЦ, НОМИНИРУЮЩИХ ЭКОНОМИЧЕСКИЕ РЕАЛИИ

АРУТЮНЯН Л. А.

Резюме

Посредством компонентного анализа лексических единиц, номинирующих те или иные экономические реалии, установлена семантическая структура, обуславливающая использование данных существительных для обозначения таких явлений, как экономический рост и упадок. Исследование показало, что архисемой семного состава данных слов является "событие" в самом общем виде, за которым следуют дифференциальные семы "процесс/действие", "изменение", "рост" и "упадок". В ряде случаев наличествуют потенциальные семы, такие как "внезапность", "улучшение", "ухудшение" и 'колебание'.

SEMANTIC ANALYSIS OF LEXICAL UNITS DENOTING ECONOMIC EVENTS

L. HARUTYUNYAN

Abstract

The present paper addresses the semantic structure of lexical units in economic events. The componential analysis of these units has shown that the semantics of these words is based on a wide range of semes, which condition the use of these words for denoting the upswings and downswings in the economy. Thus, the archetypal seme is 'event' in its broadest sense, followed by a range of differential semes as 'process/action', 'change', 'growth' and 'decline'. Some cases highlight the presence of such potential semes as 'suddenness', 'improvement', 'deterioration' and 'fluctuation'.